ԱՇԽԱՐՀԻ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՄԱՄԻԿՈՆ ԱՍԱՏՐՅԱՆ

XVII—XVIII դդ. մետաֆիզիկան գտնում էր, որ աշխարհը կառավարվում է որոշակի փոքրաթիվ, պարզ ու հավերժական օրենքներով։ Դա բխում էր այն ժամանակվա գիտությունների զարգացման մակարդակից։ Դրանցից ամենազարգացածը մեխանիկան էր, որը և ընկած էր ընդհանուր աշխարհայացքի հիմքում։ Աշխարհի վերաբերյալ մեխանիկական, մետաֆիզիկական հայացքը հիմնավորվում էր նաև բնության օրենքների հավիտենական անփոփոխության գաղափարով։

Օրենքների մետաֆիզիկական ըմբռնումն այնքան խորն էր արմատավորվել XIX դ. բուրժուական գիտության, հատկապես փիլիսոփայության մեջ, որ անգամ մեծ դիալեկտիկ Հեգելը չկարողացավ ազատվել դրանից։

Մետաֆիզիկան վճռական հարված ստացավ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի կողմից, որոնք հետևողականորեն կիրառեցին զարգացման սկզբունքը, այն տարածելով աշխարհի օրենքների վրա։

Թեև օրենքների զարգացումը մարքս-լենինյան փիլիսոփայության մեջ հանրաճանաչ է, սակայն դրա որոշ էական հարցեր բանավիճային են։ Վեճեր են մղվում, օրինակ, այն հարցի շուրջը, թե մասնավոր օրենքների դրսևորման ձևերի, ուժի և այլ կողմերի պատմական փոփոխությունը կարելի՞ է արդյոք գնահատել որպես այդ օրենքների զարգացում։ Այս հարցին ոմանք բացասաբար են պատասխանում և, հետևաբար, ժխտում օրենքների զարգացումը։ «Օբյեկտիվ օրենքները,— գրում է Վ. Տուգարինովը,— չեն կարող փոփոխվել կամ զարգանալ. նրանք կամ հաստատուն կերպով գործում են, կամ փոխարինվում են մեկը մյուսով»[1]։ Գ. Շտրակսը, ընդհակառակը, գտնում է, որ զարգանում են օրենքների ոչ միայն դրսևորման ձևերը, գործողության ոլորտը, ուժը, եղանակն ու արդյունքները, այլև բովանդակությունը։ Ըստ որում, դրանք զարգանում են փոփոխման իմաստով, սակայն օրենքների էությունը, միջուկը չի զարգանում և մնում է անփոփոխ[2]։ Ըստ Վ. Սոկոլովի, զարգացման ընթացքում փոխվում են օրենքների դրսևորման ձևերը և մյուս կողմերը, բայց ոչ բովանդակությունն ու արդյունքները։ Դրանք միայն հարստանում են։ Նա ընդունում է օրենքների բովանդակության զարգացումը սոսկ

---

[1] В. П. Тугаринов, Законы объективного мира, их познание и использование, Л., 1954, стр. 76.

[2] Г. М. Штракс, О развитии объективных законов («Вопросы философии», 1961, № 7, стр. 63).

քանակական, բայց ոչ որակական իմաստով, ուստի և չի գնահատում այն՝ որպես փոփոխություն[3]։

Այս հարցերում ամենահետևողականը Ի. Նովիկն է, ըստ որի «զարգացումը տարածվում է օրենքի բոլոր տարրերի վրա»[4]։ Սակայն Ի. Նովիկը չի պարզաբանում, թե ինչպես են զարգանում օրենքները։

Վիճելի է նաև համընդհանուր օրենքների զարգացման հարցը։ Կարծիք կա, որ այդ օրենքների համընդհանրությունը բացառում է դրանց զարգացումը։ Մյուսները, ընդհակառակը, համոզված են, որ զարգանում են բոլոր օրենքները և որ միայն համընդհանուր օրենքները չեն կորցնում իրենց հիմնական որակը և գործում են մշտապես։ Ահա սրանք են հիմնական վիճաբանական հարցերը։ Տարակարծություններն ընդգրկում են նաև դրանց հետ կապված բազմաթիվ նույնպես կարևոր, բայց ավելի նեղ հարցեր։

Պրոբլեմի մեջ ճիշտ կողմնորոշվելու համար նախ պետք է պարզել օրենքների զարգացման հիմքը և զարգացման ու փոփոխության փոխհարաբերությունը։

Սովետական փիլիսոփայական գրականության մեջ (Բ. Կեդրով, Գ. Շտրակս, Ի. Նովիկ) տարածված է այն կարծիքը, որ օրենքների զարգացման հիմքը նրանց կախվածությունն է պայմաններից։ Այսպես, օրինակ, Ի. Նովիկը նշում է, որ օրենքների կախվածությունը պայմաններից նրանց զարգացման մեխանիզմն է։ Տվյալ դրույթը, մեր կարծիքով, լուրջ ճշգրտումների կարիք ունի։ Սակայն նախքան այդ պետք է թռուցիկ շոշափել օրենքի գործողության պայմանների և դրանց դասակարգման հարցերը։ Ամեն մի օրենք գործում է որոշակի պայմաններում, որոնք առաջացնում են այն, որոշում նրա բովանդակությունը, գործողության ոլորտը, ուժը և դրսևորման ձևերը։ Պայմանների առումով էական տարբերություն կա մասնավոր և համընդհանուր օրենքների միջև։ Մասնավոր օրենքների պայմանները բաժանվում են չորս խմբի՝ սպեցիֆիկի, ոչ սպեցիֆիկի, մասնավորի և պատահականի։ Սպեցիֆիկ պայմաններն օրենքի պատճառն են և որոշում են նրա բովանդակությունը։ Ոչ սպեցիֆիկ պայմանները օրենքի ընդհանուր հիմքն են, նրա համար արտաքին են, ուստի չեն որոշում նրա բովանդակությունը։ Մասնավոր պայմաններն օրենքին ենթակա երևույթների եզակի կողմերն են, որոնք որոշում են նրա կոնկրետ դրսևորումները։ Պատահական պայմանները զուտ արտաքին գործոններ են, որոնք կապի մեջ մտնելով օրենքի հետ, ձևափոխում են նրա դրսևորումները և այն դարձնում տենդենց։ Համընդհանուր օրենքները, որպիսիք են դիալեկտիկական մատերիալիզմի օրենքները, օժտված են միայն սպեցիֆիկ և մասնավոր պայմաններով։ Դրանց սպեցիֆիկ պայմաններն են մատերիան, նրա ատրիբուտները և մյուս համընդհանուր հատկությունները, իսկ մասնավոր պայմաններն են ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և այլ գործոնների համախմբությունները։

Օրենքի պայմաններն ու դրանց դասակարգումը թեթևակի պարզելուց հետո կարելի է ձեռնամուխ լինել վերոհիշյալ դրույթի ճշգրտումներին։ Նախ, օրենքների կախվածությունը պայմաններից ինքնին չի վկայում դրանց զար-

---

[3] В. С. Соколов, Закон как категория марксистской диалектики («Вопросы диалектического материализма», М., 1960, стр. 23).

[4] И. Б. Новик, Вопросы стиля мышления в естествознании, М., 1975, стр. 72.

գացման մասին։ Այն լոկ վկայում է, որ ամեն մի օրենք գոյություն ունի պայմանների հետ կապի մեջ։ Ուրեմն, որպեսզի դրանից բխի նրանց զարգացումը, պետք է ընդունել նաև պայմանների զարգացումը։ Երկրորդ, կան օրենքներ, որոնց որոշ պայմաններ պատմական չեն։ Հետագայում կպարզենք, որ համընդհանուր օրենքների սպեցիֆիկ պայմանները զարգացման ենթակա չեն։ Դրանք մատերիայի այն հավիտենապես անփոփոխ հատկություններն են, որոնք պայմանավորում են աշխարհի սուբստանցիոնալ որոշակիությունը։ Պատմական բնույթ ունեն միայն մասնավոր օրենքների սպեցիֆիկ պայմանները։ Երրորդ, մասնավոր օրենքների ոչ բոլոր պայմանների պատմականությունն է նշանակում այդ օրենքների զարգացում։ Նախ նշենք, որ, ի տարբերություն համընդհանուր օրենքների, մասնավոր օրենքների բոլոր պայմանները պատմական են, քանի որ դրանք մատերիայի կոնկրետ դրսևորումներ և նրա զարգացման որոշակի փուլի արդյունք են։ Այսպես, պատմական են մասնավոր օրենքների ոչ սպեցիֆիկ պայմանները, որովհետև որքան էլ դրանք ընդհանուր լինեն, այնուամենայնիվ համընդհանուր չեն, ուստի և ինչ որ ժամանակ են առաջացել։ Այսպես, օրինակ, հասարակության օրենքների ոչ սպեցիֆիկ կենսաբանական, քիմիական ու ֆիզիկական պայմաններն առաջացել են մատերիայի զարգացման որոշակի փուլում։

Մասնավոր օրենքների սպեցիֆիկ պայմանները նույնպես պատմական են, քանի որ դրանք ևս մատերիայի զարգացման արդյունք են։ Օրինակ, Կեպլերի օրենքները սկսել են գործել մի քանի միլիարդ տարի առաջ, երբ առաջացել է Արեգակնային համակարգը։ Արժեքի օրենքը ուժի մեջ է մտել մոտ 7 հազար տարի առաջ, երբ ստեղծվել են նրա սպեցիֆիկ պայմանները՝ աշխատանքի հասարակական բաժանումը և մասնավոր սեփականությունը։

Պատմական են նաև մասնավոր օրենքների պատահական և բոլոր օրենքների մասնավոր պայմանները, որքանով որ դրանք նույնպես մատերիայի կոնկրետ դրսևորումներ են։ Թեև մասնավոր օրենքների բոլոր պայմաններն են պատմական, սակայն դրանց զարգացումը կապված է միայն սպեցիֆիկ և որոշ չափով մասնավոր պայմանների զարգացման հետ, որքանով սպեցիֆիկ պայմանները որոշում են դրանց բովանդակությունը։ Իսկ մասնավոր պայմանները որոշ չափով բնորոշում են սպեցիֆիկ պայմանների վիճակը և զարգացման մակարդակը տվյալ պահին, ուստի հանդիսանում են նաև օրենքների զարգացման կոնկրետ ցուցանիշներ։

Ոչ սպեցիֆիկ ու պատահական պայմանների զարգացումը կապ չունի օրենքների զարգացման հետ, որովհետև դրանք չեն որոշում նրանց բովանդակությունը։ Դրանք հաճախ խորապես ազդում են օրենքների վրա, բայց չեն պայմանավորում վերջիններիս զարգացումը, որովհետև տվյալ ազդեցությունն արտաքին է։ Նման փոփոխությունները պետք է որակավորվեն որպես օրենքների սոսկ փոփոխություն (շարժում)։

Այստեղ նկատելի է օրենքների սոսկ փոփոխության և զարգացման էական տարբերությունը, որը հաճախ անտեսվում է։ Դա խանգարում է փոփոխությունների տիրույթից զարգացման պրոցեսների առանձնացմանն ու վերլուծությանը։

Զարգացումը փոփոխության այն ձևերից է, որի պատճառները ներքին բնույթ ունեն։ Մի այլ ձև են արտաքին պատճառներ ունեցող փոփոխությունները, որոնք ավելի հարմար տերմին չունենալու պատճառով կարելի է ան-

վանել սոսկ փոփոխություն»։ Օրենքների մեջ փոփոխությունների ամբողջությունը բոլոր պայմանների արգասիքն է, իսկ զարգացումը բխում է միայն ներքին՝ սպեցիֆիկ պայմաններից։

Այստեղ ծառանում է մի կարևոր հարց. ո՞րն է սպեցիֆիկ պայմանների զարգացման պատճառը։ Մեր կարծիքով, հարցի լուծման բանալին օրենքների ու սպեցիֆիկ պայմանների փոխադարձ կապի մեջ է։ Ոչ միայն օրենքներն են կախված սպեցիֆիկ պայմաններից, այլև՝ հակառակը։ Եվ դա պատահական չէ, որովհետև օրենքները ոչ այլ ինչ են, եթե ոչ իրենց սպեցիֆիկ պայմանների ներքին կապեր։ Սկսելով գործել, օրենքները վերարտադրում են իրենց սպեցիֆիկ պայմանները և կայունանում։ Օրինակ, արժեքի օրենքը, ծագելով աշխատանքի հասարակական բաժանման ու մասնավոր սեփականության հիման վրա, անընդհատ վերարտադրում է դրանք և դառնում կայուն տնտեսական կապ։ Սոցիալիզմի տնտեսական օրենքներն էլ են վերարտադրում իրենց սպեցիֆիկ պայմանները, որոնցից կարևորագույնը հանրային սեփականությունն է։ Հետևաբար, նրանք կապված են դիալեկտիկական անցումներով։ Սպեցիֆիկ պայմանները մի կողմից օրենքների հիմքն են, իսկ մյուս կողմից՝ արդյունքը։ Այդ անցումների ընթացքում սպեցիֆիկ պայմանները զարգանում են, իսկ օրենքները հանդիսանալով նրանց զարգացման ներքին մեխանիզմը, իրենք ևս զարգանում են։ Այստեղ պարզվում է Ի. Նովիկի սխալը, որն օրենքների զարգացումը բացատրում է դրանց ու բոլոր պայմանների դիալեկտիկական կապով[6]։ Մինչդեռ, իրականում, զարգացման հիմքն ընկած է օրենքների ու միայն սպեցիֆիկ պայմանների դիալեկտիկայի ոլորտում։

Օրենքների զարգացման պրոցեսը հետազոտելիս առաջանում է երկու դժվարություն։ Դրանցից առաջինը կապված է օրենքի ու էության միասնության, իսկ երկրորդը՝ օրենքի կոնկրետության հետ։

Հայտնի է, որ էությունը զարգացող երևույթների կայուն հիմքն է։ Օրենքն էլ, լինելով էական, նույնպես կայուն է։ Այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ դրանց զարգացումը։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «ոչ միայն երևույթներն են անցողիկ, շարժուն, հոսուն, անջատված սոսկ պայմանական զեհերով, այլ իրերի էությունները ևս»[7]։ Սակայն այստեղ մի նրբություն կա։ Էության հոսունությունը, զարգացումը բացատրելու համար բավական է ելնել նրանից, որ այն բազմաթիվ կողմերի ամբողջություն է, որոնք որակապես փոխվում են որոշ հերթականությամբ։ Սակայն օրենքների նկատմամբ այս մոտեցումն անբավարար է։ Քանի որ օրենքը, որպես կոնկրետ կապ, էության կողմերից մեկն է, ոստի և վերը նշվածի համաձայն պետք է կա՛մ մնա նույնը, կա՛մ էլ միանգամից փոխվի։ Ինչպես Վ. Տուգարինովն է նշում, օրենքը կարող է կամ գործել, կամ չգործել, միջինը չկա։ Ուրեմն, օրենքների զարգացումը հնարավոր է միայն նրանց հերթափոխի ձևով։

Այս հետևությունն անխուսափելի է, երբ օրենքը հանգեցվում է մերկ, վերացական տեսքով վերցված, բացարձակապես պարզ էական կապի և մի կողմ են թողնվում նրա գործողության պայմանները, ոլորտը, մեխանիզմը,

---

[5] «Принцип развития», Саратов, 1972, стр. 40.
[6] И. Б. Новик, նշվ. աշխ., էջ 74—75։
[7] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 38, էջ 318։

ուժը և դրսևորման ձևերը։ Սակայն, երբ օրենքը վերցվում է իր բոլոր կողմերով հանդերձ, ապա անմիջապես պարզվում է նրա աստիճանական զարգացման հնարավորությունը։ Ուստի, օրենքների զարգացումը ժխտող և ընդունող տեսակետների հակադրությունը, ըստ էության, հանգում է օրենքների զարգացման հակադիր ըմբռնմանը։ Առաջին տեսակետը փաստորեն ժխտում է միայն օրենքների աստիճանական զարգացումը, իսկ երկրորդն ընդունում է օրենքների զարգացման և՛ աստիճանական, և՛ հերթափոխային ձևերը։ Այս հակադրությունը բխում է օրենքի ըմբռնումների սկզբունքային տարբերությունից։

Ուշագրավ է, որ երկրորդ տեսակետի կողմնակիցներից ոմանք (օրինակ, Գ. Շտրակսը) օրենքի միջուկի աստիճանական զարդացումը մերժելիս փաստորեն ելնում են միջուկի բացարձակ պարզությունից և այդ սահմաններում հարում առաջին տեսակետին։

Պարզելով հակադիր տեսակետների բնույթն ու մեթոդաբանական հիմքերը, անցնենք մասնավոր օրենքների զարգացման հարցին։

Մասնավոր օրենքների զարգացումը հիմնված է դրանց ու սպեցիֆիկ պայմանների դիալեկտիկական անցումների վրա, որոնց ընթացքում օրենքները մի կողմից անընդհատ վերարտադրում են իրենց սպեցիֆիկ պայմանները և դրանով հավերժացվելու տենդենց են դրսևորում։ Մյուս կողմից՝ վերարտադրությունը կատարվում է ընդլայնված չափերով, որի հետևանքով սպեցիֆիկ պայմաններում տեղի են ունենում աստիճանական, քանակական փոփոխություններ, որոնք կուտակվելով, ի վերջո, հանգեցնում են որակական փոփոխության, նոր սպեցիֆիկ պայմանների և դրանց բազայի վրա նոր օրենքների առաջացմանը։

Մի խոսքով, զարգացման պրոցեսում տվյալ օրենքի գործողության արդյունքները մի ուրիշ օրենքի համար դառնում են սպեցիֆիկ պայմաններ, իսկ վերջինիս արդյունքներն իրենց հերթին այլ օրենքի համար են դառնում սպեցիֆիկ պայմաններ և այդպես շարունակ։ Այդ ձևով են տեղի ունենում անցումները մատերիայի շարժման հիմնական ձևերի միջև և առանձին ձևերի շրջանակներում։

Վերոհիշյալ անցումների վրա հիմնված սպեցիֆիկ պայմանների քանակական ու որակական փոփոխությունները որոշում են մասնավոր օրենքների զարգացման ընդհանուր բովանդակությունը, որը, կախված այդ փոփոխությունների բնույթից և ուղղությունից, օրենքի գործողության ոլորտի, ուժի ու դրսևորումների վրա ունեցած ազդեցությունից՝ ընդունում է բազմազան ձևեր։ Այսպես, դրանց քանակական փոփոխությունները որոշում են մասնավոր օրենքների զարգացման հիմնական ձևերից մեկը՝ աստիճանական զարգացումը սեփական որակի սահմաններում, իսկ որակական վոփոխությունները մյուս հիմնական ձևը՝ օրենքների թռիչքաձև զարգացումն ու անցումը մի որակից մյուսին։ Հիմնական ձևերն իրենց հերթին բաժանվում են մի շարք ենթաձևերի։ Աստիճանական զարգացումը գլխավորապես արտահայտվում է մասնավոր պայմանների զարգացման մակարդակի ու տեմպերի, գործողության ոլորտի, ուժի և արդյունքների կամ դրսևորումների փոփոխությունների մեջ։ Դրանցից առաջինը հետևանք է այն բանի, որ մասնավոր պայմանները սպեցիֆիկ պայմանների զարգացման կոնկրետ ցուցանիշներն են։ Օրինակ, կապիտալիզմի տնտեսական օրենքների այնպիսի մասնավոր

պայմաններ, ինչպիսիք են աշխատանքի արտադրողականությունը, արտադրողական ուժերի հանրայնացման մակարդակը և դրանց աճի տեմպերը՝ բնորոշում են կապիտալիզմի տնտեսակարգի ու նրա օրենքների զարգացման մակարդակը։

Այստեղ դրսևորվում է երևույթների ու նրանց օրենքների (իրի ու հարաբերության) միասնությունը։ Եթե երևույթները, իրերը աստիճանաբար զարգանում են, ապա դրանց օրենքները, հարաբերությունները պետք է նույնպես զարգանան, այլապես նրանց միջև խզում կառաջանա[8]։

Երկրորդ ենթաձևը մասնավոր օրենքների գործողության ոլորտի զարգացումն է, որն արտահայտվում է այդ ոլորտի ընդլայնմամբ ու նեղացմամբ։ Ընդ որում, ոլորտի ընդլայնումը վկայում է օրենքի վերընթաց, իսկ նեղացումը՝ վարընթաց զարգացման մասին։ Եվ դա օրինաչափ է, քանի որ առարկայական որևէ տիրույթ իր օրենքներով հանդերձ մյուսների համեմատ իր կենսունակությունն ու բարգավաճման կարողությունը ցուցադրում է մասնավորապես ընդլայնման միջոցով։

Երրորդ ենթաձևը մասնավոր օրենքների գործողության ուժի զարգացումն է, որը որոշվում է օրենքներին ենթակա երևույթների շարժման և զարգացման պրոցեսների արագությամբ ու տեմպերով։

Համեմատելով երկրի վրա շարժման հիմնական ձևերի օրենքների ուժը, նկատում ենք, որ ստորիններից դեպի բարձր ձևերը օրենքների գործողությունը ուժեղանում է, որով պայմանավորվում է զարգացման տեմպերի աճը։ Դա ավելի ակնհայտ է հասարակության զարգացման մեջ։ Բարձր ֆորմացիաների օրենքների ուժը ստորինների համեմատ զգալիորեն մեծ է, և դա է նոր հասարակարգի հաղթանակի գրավականը։

Վերջապես, չորրորդ ենթաձևը մասնավոր օրենքների գործողության արդյունքների (դրսևորումների) զարգացումն է։ Այն այդպիսին է, որովհետև դրանք օրենքների սպեցիֆիկ պայմաններն են դառնում զարգացման հաջորդ ցիկլում։ Ֆիզիկական ու քիմիական տիրույթներում այն արտահայտվում է երևույթների ու պրոցեսների աստիճանական բարդացման, իսկ հասարակական կյանքում՝ տնտեսության ու կուլտուրայի զարգացման նոր մակարդակի երևույթների մեջ, որոնց հիման վրա ծավալվում է այդ օրենքների հետագա գործողությունը։ Այսպես, զարգացած սոցիալիզմի փուլը մեր երկրում միաժամանակ սոցիալիստական հասարակարգի տնտեսական օրենքների զարգացման բարձր մակարդակ է նշանակում։ Այդ մակարդակը հնարավորություն է տալիս ամենայն ուժով ցուցադրելու սոցիալիզմի առավելությունները կապիտալիզմի նկատմամբ։

Ավարտելով մասնավոր օրենքների՝ սեփական որակի սահմաններում աստիճանական զարգացման ձևի չորս ենթաձևերի վերլուծությունը, հարկ է նշել, որ դրանք միմյանց հետ սերտ կապի մեջ են և, բացի այդ, փոխադարձ անցումներով կապված են օրենքների զարգացման թռիչքային ձևի հետ, երբ վերջիններս որակապես փոխվում են։ Դրա պատճառը դիալեկտիկայի հիմնական օրենքներից մեկի՝ քանակական փոփոխություններից որակականի անցման օրենքի գործողությունն է։ Մասնավոր պայմանների, գործողության

---

[8] И. Б. Новик, նշվ. աշխ., էջ 72։

ոլորտի, ուժի ու դրսևորումների քանակական փոփոխությունների կուտակումն անվերջ չի կարող լինել, քանի որ գալիս է մի պահ, երբ դա առաջացնում է օրենքների որակական փոփոխություններ։ Այսպես, մասնավոր պայմանների զարգացումը հասնելով որոշ սահմանի, սպեցիֆիկ պայմանների որակական փոփոխություն է առաջացնում։ Ձևավորվում են որակապես նոր սպեցիֆիկ պայմաններ ու համապատասխան օրենքներ։ Ջերմատիճանների, ճնշումների ու այլ ֆիզիկական մասնավոր պայմանների զարգացման հետևանքով ատոմների ու քիմիական օրենքների առաջացումը դրա ցայտուն օրինակն է։ Սա օրենքների թռիչքային զարգացման առաջին ենթաձևն է, որը տեղ է գտնում շարժման բոլոր հիմնական ձևերում ու մի հիմնական ձևից մյուսին անցման ժամանակ։

Հաջորդ ենթաձևը պայմանավորված է մասնավոր օրենքների գործողության ոլորտի փոփոխությամբ։ Թռիչքն այստեղ կատարվում է որոշ օրենքների գործողության ոլորտի ծագման ու ընդլայնման և այլ օրենքների ոլորտի նեղացման ու վերացման շնորհիվ։

Թռիչքի տվյալ ենթաձևն ինքնին բազմազան է և ունի մի շարք ավելի նեղ ենթաձևեր։ Դրանցից առաջինը օրենքի գործողության ոլորտի ընդլայնման ընթացքում որակապես նոր երևույթների առաջացումն է, երևույթներ, որոնք զարգացման ավելի բարձր փուլ են, բայց դուրս չեն գալիս նրա սահմաններից։ Տվյալ տիպի թռիչքները մասնակի են։ Այդպիսին են նաև օրենքի ոլորտի ընդլայնման և նոր օբյեկտների վրա նրա տարածման հետևանքով առաջացած թռիչքները, որոնք օրենքների և տվյալ օբյեկտների փոխներգործության արդյունք են։ Դրանցից մեկը օրենքի գործողության մեջ ընդգրկված օբյեկտի վերափոխումն է։ Վերջինիս օրինակն է ֆեոդալական ռենտայի վերափոխումը կապիտալիստական բացարձակ ռենտայի։ Մյուսը հիմնական որակի սահմաններում որակապես նոր օբյեկտների առաջացումն է, որի օրինակն է դիֆերենցիալ ռենտան։ Օրենքի ոլորտի մեջ ընդգրկված նոր օբյեկտները կարող են նաև այնքան խոր ազդել նրա վրա, որ արդյունքները կազմեն նոր որակ, ծնունդ տան նոր օրենքների, որոնք իշխող դիրք գրավեն ելակետային որակի և օրենքի նկատմամբ։ Նման տիպի թռիչք է աշխատուժի վրա արժեքի օրենքի տարածման հետևանքով հավելյալ արժեքի օրենքի առաջացումը և արժեքի օրենքի նկատմամբ իշխող դիրք գրավելը։

Որակական անցումներին մասնակցում է նաև զարգացման երրորդ ենթաձևը՝ օրենքների ուժի փոփոխությունը։ Դա բացատրվում է նրանով, որ օրենքը զարգացման տվյալ աստիճանում ի վիճակի է ապահովելու պրոցեսների որոշակի արագություն և ինտենսիվություն։ Երբ դրանք գերազանցում են օրենքի հնարավորությունները, նրա մեջ տեղի են ունենում որակական փոփոխություններ, որոնց շնորհիվ այն հարմարվում է պրոցեսների նոր ռիթմի և ավելի է խթանում զարգացման տեմպերը։ Այսպես, փողի ծագումը պայմանավորված է արժեքի օրենքի ոլորտի ընդլայնման ընթացքում ապրանքափոխանակության ինտենսիվացմամբ։ Կյանքի ծագումը նույնպես պայմանավորված է քիմիական օրենքների ուժի մեծացմամբ, որն ապահովում են ֆերմենտները։ Թռիչքի տվյալ ենթաձևը, ինչպես և նախորդ երկուսը, սերտորեն կապված են չորրորդ ենթաձևի հետ, քանի որ օրենքների բոլոր կողմերի որակական փոփոխություններն արտահայտվում են արդյունքների մեջ, որոնք

որակապես փոխվելով, դառնում են նոր սպեցիֆիկ պայմաններ և որակապես նոր օրենքների համար հիմք։

Մասնավոր օրենքների պատմականությունն ամենացայտուն կերպով դրսևորվում է դրանց առաջացման և անհետացման մեջ։ Այդ պատճառով էլ Ֆ. Էնգելսը մետաֆիզիկայի դեմ մղած պայքարում առաջին հերթին դա է մատնանշել։ Հենվելով XIX դ. 70-ական թվականների բնագիտության նվաճումների վրա, նա գրել է. «Բնության հավիտենական օրենքները նույնպես ավելի ու ավելի մեծ չափով փոխարկվում են պատմական օրենքների»[9]։ Բնագիտության հետագա զարգացումը ապացուցեց և շարունակում է ապացուցել Ֆ. Էնգելսի իրավացիությունը։ Ներկայումս գիտությունը հաստատում է հասարակության ու բնության բոլոր հայտնի օրենքների պատմական ծագումը, բացառությամբ ֆիզիկայի ֆունդամենտալ օրենքների։ Վերջիններիս առաջացման հարցի լուծումը կախված է համապատասխան ֆիզիկական օբյեկտների ծագման հարցի լուծումից։ Սակայն ժամանակակից ֆիզիկան ու տիեզերաբանությունն անկարող են լուծել այդ հարցը, որովհետև ֆիզիկական պրոցեսները տիեզերքում իրենց զարգացման տեմպերի դանդաղությամբ և մասշտաբների վիթխարիությամբ հակայական չափով գերազանցում են տվյալ գիտությունների հնարավորությունները։ Ուստի դրա լուծումը ապագայի գործ է։

Որոշ տեսաբաններ ենթադրում են, որ այդ հարցի լուծման հետևանքով ֆիզիկան զգալիորեն կվերածվի պատմական գիտության և նրա պատմական հարցերը կմիահյուսվեն տիեզերքի պատմության հետ։ Հնարավոր է նաև, որ դա հիմք դառնա օրենքների վիճակագրական բնույթն ըմբռնելու համար, որովհետև վիճակագրականությունը կարող է օրենքների զարգացման արդյունքը լինել[10]։

Ֆիզիկայի ֆունդամենտալ օրենքների զարգացման տեսությունային հնարավորությունը պարզելուց հետո մենք կարող ենք անցնել կենտրոնական հարցերից մեկի՝ օրենքի միջուկի զարգացման հարցին։ Ոմանք (օրինակ, Գ. Շտրակսը) գտնում են, որ օրենքի միջուկը, այսինքն՝ վերացականորեն վերցված էական կապը, աստիճանական զարգացման ենթակա չէ, այլ կարող է փոխվել միանգամից։ Մյուսները (օրինակ, Ի. Նովիկը) պնդում են հակառակը։ Մեր կարծիքով, երկրորդ տեսակետը ճշմարիտ է։ Բայց դրա հիմնավորումը լուրջ դժվարությունների է հանդիպում։ Միջուկի աստիճանական զարգացման հարցը հեշտ լուծելի է քանակական օրենքներում։ Ս. Մելյուխինը նշում է, որ տվյալ տիպի օրենքներում այն արտահայտվում է ֆունկցիոնալ կապի ձևի և հաստատունների փոփոխության մեջ[11], այսինքն՝ հենց այն տարրերի, որոնք այդ օրենքների միջուկն են կազմում։ Շատ ավելի բարդ է որակական օրենքների միջուկի աստիճանական զարգացման հարցը, քանի որ այդ օրենքները, երևույթների քանակական կողմից վերացարկման արդյունք լինելով, մարմնավորում են որակի կայունությունը։

Հիրավի, ի՞նչ աստիճանական զարգացում կարող է տեղի ունենալ արժեքի, ըստ աշխատանքի բաշխման և այլ որակական օրենքների միջուկների

---

9 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, Երևան, 1969, էջ 243։

10 Այդ հարցերի մասին տե՛ս И. Б. Новик, նշվ. աշխ., էջ 81—82, 93։

11 С. Т. Мелюхин, О диалектике развития неорганической природы, М., 1960, стр. 165.

մեջ։ Ապրանքի արժեքը կամ որոշվում, կամ չի որոշվում անհրաժեշտ աշխատաժամանակով՝ միջինը չկա։

Սակայն բերված փաստարկները բավարար չեն։ Դրանք չեն բացառում հիմնական որակի սահմաններում մասնակի որակական փոփոխությունների հնարավորությունը, որոնք օրենքների հիմնական որակի զարգացման մնջ աստիճանականություն են մտցնում։ Դրա օրինակն է արժեքի օրենքի միջուկի զարգացումը՝ կապված արժեքի ձևավորման հետ։ Արժեքի ձևավորման առաջին փուլը, ըստ Կ. Մարքսի, եզակի կամ պատահական արժեքն է։ Այստեղ արժեքի օրենքը դեռ չկա, քանի որ օրենքը անհրաժեշտություն է։ Այն սկզբնավորվում է ծավալուն արժեքի, ձևավորվում է համընդհանուր արժեքի և զարգացման գագաթնակետին է հասնում դրամական արժեքի փուլում։ Օրենքի միջուկի հետագա զարգացումը պայմանավորված է ինքնաճող հավելյալ արժեքի ծագմամբ։

Փողի՝ կապիտալի վերածվելուց սկսվում է արժեքի օրենքի վարընթաց զարգացումը, որը բնորոշվում է նրա մեջ խորթ տարրերի՝ շահագործման հարաբերությունների, պատմական և բարոյական տարրերի (աշխատուժի արժեքի մեջ), և արժեքի դրամական ձև ստացող, բայց սկզբունքորեն արժեք չունեցող օբյեկտների (պատվի, խղճի և այլն) ներխուժմամբ, օբյեկտներ, որոնց գինը կարծեցյալ է։ Դա, անշուշտ, վկայում է օրենքի ընդերքում տեղի ունեցող քայքայման պրոցեսների մասին։

Արժեքի օրենքի վարընթաց զարգացման հաջորդ խոշոր փուլը սկսվելով սոցիալիզմի օրոք, կավարտվի կոմունիզմի պայմաններում, երբ ընդմիշտ կվերանա։

Սկզբունքորեն աստիճանական զարգացման նման պրոցեսով (լինելիություն, հատունություն և անկում) անցնում են աշխարհի բոլոր օրենքներն իրենց միջուկներով հանդերձ։ Գիտության խնդիրն է վեր հանել և մարդկանց ծանոթացնել այդ չափազանց նուրբ և դժվար որսալի պրոցեսները։

Զարգանո՞ւմ են արդյոք աշխարհի համընդհանուր օրենքները, որպիսիք են դիալեկտիկական մատերիալիզմի օրենքները։ Այս հարցի վերաբերյալ, ինչպես նշվեց, առկա են երկու հակադիր տեսակետներ։ Ըստ առաջին տեսակետի, համընդհանուր օրենքները նույնպես զարգացման ենթակա են[12]։ Երկրորդ տեսակետի համաձայն՝ համընդհանուր օրենքները տարածաժամանակային ոչ մի սահման չունենալու պատճառով սկզբունքորեն զարգացման ենթակա չեն[13]։

Որոնք են առաջին տեսակետի օգտին բերված փաստարկները։ Դրանցից մեկը համընդհանուրի ու առանձնահատուկի դիալեկտիկական միասնությունն է, իսկ մյուսը՝ այն պայմանների որակական փոփոխությունն է, որոնց բազայի վրա գործում են համընդհանուր օրենքները և, հաջորդը, մարդկային հասկացությունների ճկունությունն է, որի հիմքում ընկած է օբյեկտիվ աշխարհի ու նրա օրենքների փոփոխականությունը։ Ըստ վերոհիշյալ տեսակետի համընդհանուրի ու առանձնահատուկի միասնությունից հետևում է, որ

---

12 «Вопросы философии», 1961, № 7, стр. 69; И. Б. Новик, նշվ. աշխ., էջ 73։

13 С. Т. Мелюхин, նշվ. աշխ., էջ 166։ Б. М. Кедров, Предмет и взаимосвязь естественных наук, М., 1967, стр. 146.

առանձնահատուկի՝ տվյալ դեպքում մասնավոր օրենքների, զարգացումը համընդհանուրի՝ դիալեկտիկական մատերիալիզմի օրենքների զարգացում է նշանակում և հակառակը, այլապես դրանց կապը կխզվեր։ Մյուս փաստարկում պնդվում է, որ համընդհանուր օրենքների հիմք հանդիսացող պայմանները զարգանում, որակապես փոխվում են, ուստի պետք է զարգանան նաև այդ օրենքները։ Երրորդ փաստարկում հակացությունների զարգացումը դիտվում է որպես նրանց օբյեկտիվ հիմքի, այդ թվում, համընդհանուր օրենքների զարգացման վկայություն։

Մեր համոզմամբ բերված փաստարկները բավարար չեն։ Նախ առանձնահատուկի զարգացումից չի բխում համընդհանուրի զարգացումը։ Դրա պատճառն այն է, որ ամեն մի փոփոխություն կայունություն է ենթադրում, իսկ դրա սահմանային մարմնացումը մատերիան է։ Ֆ. Էնգելսը իրավացիորեն պնդում էր, որ «մատերիան իր բոլոր փոխակերպումների մեջ մնում է հավերժորեն միևնույնը»[14]։ Հետևաբար, համընդհանուր օրենքները, գործելով մատերիայի ու նրա ատրիբուտների հիման վրա, նույնպես կայունության մարմնավորում են։ Երկրորդ փաստարկը սխալ է պարունակում, որը հետևանք է այդ օրենքների պայմանների թույլ ուսումնասիրության։ Այսպես, անորոշ է մնում, թե որոնք են այդ օրենքների հիմք հանդիսացող պայմանները։ Եթե դրանք մատերիան ու նրա ատրիբուտներն են, ապա որակապես փոխվել չեն կարող, իսկ եթե մատերիայի դրսևորման ձևերին բնորոշ պայմաններ են, ապա որակապես փոխվում են։ Սակայն դրանք ոչ թե համընդհանուր, այլ մասնավոր օրենքների հիմքն են։ Համընդհանուր օրենքների համար դրանք մասնավոր պայմաններ են։ Այդ անորոշությունից էլ ծնվել է այն սխալ պնդումը, որ համընդհանուր օրենքների հիմք հանդիսացող պայմանները որակապես փոխվում են, իսկ օրենքները՝ ոչ։ Երրորդ փաստարկը նույնպես նպատակին չի հասնում, քանի որ հակացությունների ճկունությունը բացարձակ չէ և կայունություն է ենթադրում։

Համընդհանուր օրենքների զարգացման հնարավորությունը հիմնավորելու համար, դրանից բացի, մեր կարծիքով, ոչ ստույգ է մեկնաբանվում այդ (և ոչ միայն այդ) օրենքների բովանդակությունը, դրա հարաբերությունը օրենքների համընդհանրության հետ և, վերջապես, զարգացման գաղափարն ընդհանրապես։ Գ. Շտրակը գտնում է, որ համընդհանուր օրենքների բովանդակությունը կոնկրետ պայմանների ազդեցության արդյունք է և ունի անվերջորեն բազմազան կոնկրետ բնույթ[15]։ Ուստի, այն, ի տարբերություն միջուկի, ոչ լիովին է համընդհանուր։ Նրա մեջ կան մասնավոր կողմեր, որոնք զարգացման ընթացքում որակապես փոխվում են։ Քանի որ զարգացումը չի շոշափում վերոհիշյալ օրենքների միջուկը, այն հանգեցվում է սոսկ մասնակի որակական կամ փաստորեն քանակական փոփոխության, որն անհամատեղելի է զարգացման դիալեկտիկական գաղափարի հետ։ Իրականում օրենքները չեն կարող բազմազան կոնկրետ բովանդակություն ունենալ, որովհետև դրանք ընդհանրության ձևեր են և դրանց բովանդակությունը պետք է ունենա ընդհանրության նույն աստիճանը։ Բազմազան կոնկրետ բովանդակությունն

---

14 Ֆ. Էնգելս, Բնության դիալեկտիկա, էջ 27։

15 «Вопросы философии», 1961, № 7, стр. 69.

առնչվում է մասնավոր ու պատահական պայմաններում գործող օրենքների դրսևորումների հետ։ Դա հատուկ է երևույթներին, որոնք, ըստ Հեգելի իրավացի կարծիքի, տոտալականություն են[16]։ Ուրեմն, տվյալ դրույթը վերացնում է սահմանը օրենքների ու երևույթների միջև։

Զարգացումը վերագրելով համընդհանուր օրենքների երկրորդական, մասնավոր կողմերին, դրանով փաստորեն ընդունվում է, որ զարգացումը կարող է տեղի ունենալ միայն մասնավորի ոլորտում, այսինքն՝ հերքվում է այն, ինչ ձգտում են ապացուցել։ Այսպիսով ստացվում է, որ ճշմարիտ է դրան հակադիր տեսակետը։ Հօգուտ տվյալ տեսակետի Ս. Մելյուխինը նշում է, որ այդ օրենքներն իրենց համընդհանրության շնորհիվ զուրկ են ֆունկցիոնալ ձևից, կոնկրետ պարամետրերից ու հաստատուններից, ուստի և չեն կարող զարգանալ[17]։ Դրան ավելացնենք մի էական փաստարկ ևս։ Համեմատելով ընդհանրության տարբեր աստիճան ունեցող օրենքների զարգացման տեմպերը, նկատում ենք, որ օրենքի ընդհանրության աստիճանը և զարգացման տեմպերը հակադարձ համեմատական են։ Հիրավի, շարժման բարձր ձևերից ցածրերին անցնելու հետ մեկտեղ աճում է օրենքների ընդհանրության աստիճանը և փոքրանում են նրանց զարգացման տեմպերը։

Երբ մարդկային միտքն անցնում է տվյալ ֆունդամենտալ օրենքներից ավելի խոր օրենքներին, իսկ դրանցից է՛լ ավելի խորերին, ապա դա անցում է ավելի ընդհանուր ու դանդաղ տեմպերով զարգացող օրենքներին, և դա վերջ չունի։ Փոփոխականից անփոփոխին անցնելու մտքի սույն տենդենցը իր ավարտն է ստանում աշխարհի համընդհանուր օրենքներում, որոնք անսասանության մարմնացումն են։

Ուստի, այդ օրենքների զարգացման մասին ենթադրությունը կասկածի տակ է դնում դրանց համընդհանրությունը նաև հետևյալ իմաստով. եթե վերոհիշյալ օրենքները փոփոխական են, ապա պետք է գոյություն ունենան ավելի խոր և ընդհանուր օրենքներ, որոնք դրանց հանդեպ անփոփոխ են և որոնց հիման վրա դրանք փոփոխվում են։ Դա ևս պրոբլեմի լուծում չէ, քանի որ հարց է ծագում այդ ավելի ընդհանուր օրենքների փոփոխման էլ ավելի ընդհանուր օրենքների մասին և այդպես անվերջ։ Առաջանում է՝ 1. տրամաբանական հակասություն և 2. պրոգրես դեպի անվերջություն։

Սակայն մնում է չպարզված մի հարց, որը շոշափում է հակադիր տեսակետների ամենախոր հիմքերը. եթե մատերիան զարգացման երկարատև ու բարդ պրոցես է ապրում, ապա մի՞թե դա ոչ մի կերպ չի ազդում համընդհանուր օրենքների վրա։

Նախ այս հարցը ծագում է պրոբլեմի նկատմամբ լոկալ մոտեցման դեպքում, այսինքն՝ երբ վերցվում է տիեզերքի մատչելի հատվածը, և, երկրորդ, փոփոխությունները կատարվում են համընդհանուր օրենքների մասնավոր պայմանների տիրույթում, ուստի ազդում են նրանց դրսևորման ձևերի վրա։ Բայց ոչ միայն, քանի որ դրսևորումներն օժտված են որոշակի բովանդակությամբ։ Բայց ո՞րն է դա։ Ըստ տարածված կարծիքի, որին հարում է առաջին տեսակետը, դա հենց օրենքներն են։ Մինչդեռ դրսևորումների բովանդակությունը օրենքների բովանդակությունից ավելի լայն է, որովհետև բաղկացած

---

16 Гегель, Наука логики, Соч., т. V, М., 1937, стр. 606.

17 С. Т. Мелюхин, նշվ. աշխ., էջ 166—167։

է բուն օրենքի և պայմանների, ավելացնենք, տվյալ դեպքում մասնավոր պայմանների բովանդակությունից։ Օրենքն իր դրսևորումների բովանդակության էական մասն է. ուստի և դրա փոփոխությունների կայուն կողմը։

Առաջին տեսակետը փաստորեն ելնում է պրոբլեմի նկատմամբ լոկալ մոտեցումից և համընդհանուր օրենքների ու դրանց դրսևորումների բովանդակության անթույլատրելի նույնացումից։ Սրանք են տվյալ տեսակետի ամենախոր հիմքերը։

Բայց երբ պրոբլեմին մոտենում ենք համապարփակ դիրքերից, ելնելով մատերիայի անվերջությունից ու հավերժությունից, ապա համընդհանուր օրենքների բոլոր փոփոխությունները կորցնում են իրենց նշանակությունը, որովհետև անթիվ ու անհամար անգամ կրկնվել են և սկզբունքորեն մի ինչ որ նոր բան չեն։

Հենց այս մոտեցումն է հարգատ դիալեկտիկական մատերիալիզմի օրենքների համընդհանրականությանը։ Հենց այդպիսի գլոբալ դիրքերից է պրոբլեմին մոտենում երկրորդ տեսակետը, իրավացիորեն հանդելով այդ օրենքների հավերժական անփոփոխելիության վերաբերյալ հետևությանը։

РАЗВИТИЕ ЗАКОНОВ МИРА

МАМИКОН АСАТРЯН

Резюме

Анализ проблемы с точки зрения взаимоотношения законов и условий их действия приводит к следующим выводам: 1. основой развития объективных законов являются диалектические взаимопереходы законов и только специфических условий, имманентно определяющих содержание этих законов; 2. развиваются лишь частные законы, поскольку их специфические условия, как формы проявления материи, историчны; 3. развитие не затрагивает всеобщих законов мира, каковыми являются законы диалектического материализма, ибо их специфические условия — материя и ее атрибуты вечны и бесконечны.